ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 19

23 դեկտեմբերի 2015 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ և 39-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 9-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 9-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձ ընտրել «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ին և սահմանել աուդիտ իրականացնող անձի հետևյալ գործառույթները.

ա) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

բ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների և ծախսերի 2016 թվականի տարեկան նախահաշվի ու դրա փոփոխությունների կատարողական հաշվետվության աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ս. Սարգսյան**